ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԱԼՍՏՅԱՆ ՄԱՐԻՆԱ ԿԱՐԵՆԻ

ՀՀ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՄԱՐՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԸ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԻԲ.00.01 - «Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ» մասնագիտությամբ սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2024

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝	Սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **ՄԱՐԻԱ ԻԳՈՐԻ ԶԱՍԼԱՎՍԿԱՅԱ**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	Սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **ԱՐՄԵՆ ԿՈԼՅԱՅԻ ՍԱՀԱԿՅԱՆ** Սոցիոլոգիական գիտությունների թեկնածու **ԳԱԳԻԿ ԿԱՐԱՊԵՏԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ**
Առաջատար կազմակերպություն՝	**ՀՀ ԳԱԱ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2024թ. սեպտեմբերի 30-ին՝ ժամը 15:00-ին, Երևանի պետական համալսարանում գործող Փիլիսոփայության և սոցիոլոգիայի 013 մասնագիտական խորհրդի նիստում: Մասնագիտական խորհրդի հասցեն՝ 0025, ք. Երևան, Աբովյան փ., 52ա:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2024 թվականի հուլիսի 25-ին:

Փիլիսոփայության և սոցիոլոգիայի 013 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ՝

Երանուհի Կարապետի Մանուկյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսությունը նվիրված է 2020թ. պատերազմից հետո տեղի ունեցած փոխակերպումներին հայաստանյան երիտասարդների սոցիալական հարմարման ուսումնասիրությանը: Երիտասարդների սոցիալական հարմարման սոցիոլոգիական խորքային ուսումնասիրությունը, սոցիալական հարմարման վրա ազդող գործոնների բացահայտումը այսօր հետազոտության և տեսական իմաստավորման կարիք ունեն, քանի որ Հայաստանը գտնվում է լուրջ փոխակերպումների պայմաններում: Սոցիալական հարմարման ուսումնասիրություններն առավել արդիական են դառնում այն հասարակություններում, որոնք գտնվում են ճգնաժամային փոփոխությունների համատեքստում:

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Սոցիալական հարմարման խնդիրը ժամանակակից մարդու համար կարևոր է, քանի որ կյանքի տարբեր փուլերում նա ստիպված է կամ ցանկանում է փոխել սոցիալական միջավայրը. նոր բնակավայր, նոր ուսումնական հաստատություն, նոր հարաբերություններ, աշխատանքային նոր գործընկերներ՝ այս ամենը ենթադրում է միջավայրի փոփոխություն և դրան հարմարվելու անհրաժեշտություն և կարիք:

Հասարակությունում սոցիալական փոփոխությունների գործընթացների համատեքստում առավել արդիական են դառնում երիտասարդության սոցիալական հարմարմանը նվիրված ուսումնասիրությունները: Երիտասարդությունը յուրաքանչյուր հասարակության մեջ այն հիմնական սոցիալական ներուժն է, որի մոբիլիզացման հնարավորությունից է մեծապես կախված հասարակության ապագա կենսունակությունը: Երիտասարդության սոցիալական հարմարման խնդիրը առանձնահատուկ նշանակություն է ստանում հասարակության ապագա զարգացումների հեռանկարների համատեքստում: Երիտասարդները՝ որպես մանկության կախվածությունից դեպի անկախության ձեռք բերման անցումային փուլում գտնվող յուրահատուկ խումբ, առավել սուր են կրում միջավայրային փոփոխությունների ազդեցությունը, հատկապես ճգնաժամերի ընթացքում[1]: Երիտասարդները դեռևս ամբողջությամբ անկախ չեն, իսկ ճգնաժամային իրավիճակները նրանց դարձնում է կրկնակի խոցելի: Նման իրավիճակներում երիտասարդների հարմարման ուսումնասիրությունը ունի ակադեմիական և մեթոդական, ինչպես նաև գործնական նշանակություն և անհրաժեշտություն:

Ավանդաբար, ինչպես նաև արդի ժամանակներում գլոբալ և լուրջ խնդիր է պատերազմը և հետպատերազմյան հասարակությունները, որոնք բախվում են սոցիալական վերակառուցման գործընթացներին, սոցիալական համախմբվածության ձևավորման մարտահրավերներին: 2020թ. համավարակը և արցախյան 44-օրյա պատերազմը հայ հասարակությանը կանգնեցրին անորոշ, ճգնաժամային իրավիճակի

[1] Տե՛ս **Furlong A.** Youth Studies: An Introduction. USA: Routledge, 2013, էջ 122-124:

առջև, երբ նոր պայմաններին և միջավայրին հարմարվելը հրամայական է ինչպես ողջ հասարակության, սոցիալական տարբեր խմբերի, այնպես էլ առանձին անհատների համար, այդ թվում երիտասարդների համար: 2023թ. Արցախյան պատերազմի շուրջ տեղի ունեցած նոր իրադարձությունները ավելի սրեցին սոցիալական լարվածությունը. Արցախի ամբողջ բնիկ հայ բնակչությունը՝ ավելի քան 120,000 մարդ բռնի տեղահանվեց Հայաստան: Հետևաբար, հետպատերազմյան պայմաններին հարմարման հիմնախնդրի ուսումնասիրությունը և իմաստավորումը խիստ արդիական է: Հատկապես, որ հետպատերազմյան հասարակությունը հավասարազոր չէ խաղաղության մեջ գտնվող հասարակության, քանի որ լայնածավալ զինված հակամարտությունների դադարից հետո ևս կարող են շարունակվել բախումները՝ մշտապես արդիական դարձնելով նոր պատերազմի վերսկսման ռիսկը:

Ատենախոսության թեմայի գիտական մշակվածության աստիճանը:

Երիտասարդների և երիտասարդության ուսումնասիրությունը զարգացում է ապրել XVIII դարից սկսած, իսկ երիտասարդության սոցիոլոգիայի տարանջատումը՝ որպես սոցիոլոգիական գիտելիքի անկախ ճյուղի, տեղի է ունեցել XX դարի 60-ական թվականներին և փոխկապակցված է «երիտասարդական հեղափոխությունների» ժամանակաշրջանի հետ: Երիտասարդության սոցիոլոգիայի տարանջատումը նպաստեց երիտասարդության խնդիրների, միջսերնդային հակամարտությունների և սոցիալական փոփոխություններում երիտասարդության դերի հանդեպ հետազոտողների ուշադրության մեծացմանը: Այս փուլում հայտնի դարձան երիտասարդության վերաբերյալ մի շարք հեղինակների առանցքային գաղափարներ, մասնավորապես, Կ. Մանհեյմի՝ նոր սերունդների՝ որպես սոցիալական առաջընթացի աղբյուրի մասին[2], Մ. Միդի՝ պատմական զարգացման տարբեր փուլերում սերունդների մշակութային շփման տեսակների և երիտասարդական մշակույթի վերաբերյալ գաղափարները[3]: Երիտասարդական ուսումնասիրությունների ձևավորման վրա էական ազդեցություն ունեցան նաև Հ. Մարկուզեի՝ երիտասարդական շարժումների վերաբերյալ վերլուծությունները[4]: Սկսած 1990-ական թվականներից երիտասարդների սոցիոլոգիական իմաստավորման զարգացման հարցում կարևոր և նշանակալի ազդեցություն են ունեցել Ու. Բեկի՝ ռիսկի հասարակության[5] և Է. Գիդենսի արդիականության վերաբերյալ տեսական մոտեցումները[6]:

Համաշխարհային սոցիոլոգիական գիտությունը սկսել է ուսումնասիրել հարմարման հիմնախնդիրները XIX դարի վերջին - XX դարի սկզբին: Հետագայում

---

[2] Տե՛ս **Mannheim K.** The problem of generations. In Essays on the sociology of knowledge. London: Routledge, 1952, 276–322 p:

[3] Տե՛ս **Mead M.** Culture and Commitment, a Study of the Generation Gap, Garden City, N.Y.: Published for the American Museum of Natural History, Natural History Press, 1970:

[4] Տե՛ս **Маркузе Г, Ванейгем Р.** Молодежный бунт. Источник свободы или новое варварство, Родина, 2023:

[5] Տե՛ս **Beck U.** Risk Society: Towards a New Modernity, London: Sage, 1992:

[6] Տե՛ս **Giddens A.** Modernity and Self Identity, Oxford: Polity, 1991:

հայտնվեցին աշխատություններ, որոնք ներկայացնում են սոցիալական հարմարման վերլուծության տարբեր տեսական և մեթոդաբանական մոտեցումներ, ինչպես նաև բացահայտում են սոցիալական հարմարման ընթացքի առանձնահատկությունները տարբեր համատեքստերում: Անհատի սոցիալական հարմարման խնդրի տարբեր տեսական ասպեկտներ դիտարկել են Թ. Պարսոնսը, Ռ. Մերտոնը, Է.Թոֆլերը, Գ.Սելյեն, Լ.Վ. Կորելը, Յու.Ա. Ալեքսանդրովսկին, Հ.Հարթմանը, Լ.Ֆիլիպսը, Ջ.Պիաժեն և այլք: Ու.Թոմասը և Ֆ.Զնանեցկին մշակել են մեթոդաբանական գործիքներ նոր սոցիալ-մշակութային միջավայրում միգրանտների հարմարման խնդիրը վերլուծելու համար: Թ.Պարսոնսը բացահայտեց հարմարման բովանդակությունը և գործառնական նշանակությունը՝ որպես սոցիալական համակարգերի հիմնարար հատկություն և գործառույթ: Նա առաջարկեց չորս ֆունկցիոնալ իմպերատիվներ, հրամայականներ, որոնք անհրաժեշտ են համակարգի ստեղծման և գործունեության համար՝ A-G-I-L սխեման. գոյատևելու համար յուրաքանչյուր համակարգ պետք է բավարարի 4 հիմնական պահանջների՝ հարմարվի իր միջավայրին (Adaptation), հասնի իր նպատակներին (Goal Attainment), ինտեգրի իր բաղադրիչները (Integration), պահպանի իր ներքին՝ լատենտ պատկերը, ձևը (Latency Pattern Maintenance)[7]:

Ըստ Ռ.Մերտոնի՝ անհատական սոցիալական հարմարման խնդիրն առավել արդիական է դառնում անոմիայի պայմաններում, ինչն արդյունք է հասարակության արժեքային-նորմատիվ համակարգի տարբեր տարրերի միջև անհամապատասխանության: Անոմիան նաև մշակութային ձևով սահմանված համընդհանուր նպատակների և դրանց հասնելու ինստիտուցիոնալ միջոցների միջև առկա հակասության և բախման արդյունք է: Ըստ այդ մոտեցման՝ Մերտոնն առանձնացնում է վարքի կամ հարմարման հետևյալ տեսակները՝ կոնֆորմիզմ, նորարարություն, ռիտուալիզմ, փախուստ իրականությունից, ապստամբություն[8]:

Սոցիալական հարմարման հիմնախնդիրը ուսումնասիրվել է նաև ամերիկացի ֆուտուրոլոգ և սոցիոլոգ Է. Թոֆլերի կողմից: Է. Թոֆլերը ձևակերպեց սոցիալական հարմարման խնդիրը տեղեկատվական կամ գիտելիքի հասարակության համատեքստում[9]:

Սոցիոլոգիայի դասականներն իրենց աշխատություններում ծավալուն անդրադարձ են կատարել պատերազմի սոցիալական հետևանքներին և ազդեցություններին, չնայած այն հանգամանքին, որ, ինչպես նշում էր Է.Գիդենսը, սոցիոլոգիան պատերազմի ուսումնասիրությանը այնքան կարևորություն չի տվել, որքան կարող էր և պետք է տար՝ նախընտրելով այն թողնել ռազմական տեսաբաններին և ստրատեգներին, քանի որ լայնորեն տարածված տեսակետ

---

[7] Տե՛ս **Parsons T**. The Social System. London: Routledge & Kegan Paul Ltd, 1970:

[8] Տե՛ս **Мертон Р**. Социальная теория и социальная структура: пер. с англ. М.: АСТ: АСТ Москва: Хранитель. 2006, 873 с.

[9] Տե՛ս **Тоффлер Э**. Футурошок. СПб.: Лань, 1997.

գոյություն ունի, որ պատերազմը «նորմալ» իրավիճակ չէ և, հետևաբար, կենտրոնական չէ սոցիոլոգիական տեսությունների և ուսումնասիրությունների համար[10]: Պատերազմի հետևանքների մասին քննարկել են Հ. Սպենսերը, Պ.Սորոկինը: Հ. Սպենսերը պնդում էր, որ հասարակության էվոլյուցիան՝ պարզից մինչև բարդ ձևեր, խթանվում է հասարակությունների միջև հակամարտություններով և պատերազմներով[11]: Պ. Սորոկինը քննարկել է սոցիալական շերտավորման վրա պատերազմների ազդեցության հարցը[12]:

Հայ սոցիոլոգիական միտքը: Երիտասարդների, սերունդների, երիտասարդության հարցերը ուսումնասիրվել և քննարկվել են նաև հայ հասարակագիտական և սոցիոլոգիական մտքի ժառանգության շրջանակներում: Գրիգոր Արծրունին, Գարեգին Նժդեհը, Երվանդ Լալայանը, Ռաֆֆին այն հեղինակներն են, ովքեր անդրադարձել են միջսերնդային փոխհարաբերություններին, կրթությանը և երիտասարդությանը:

Ժամանակակից սոցիոլոգիական հետազոտությունները ևս հիմքեր են ստեղծել զարգացնելու Հայաստանում երիտասարդության սոցիոլոգիան: Անկախության տարիներից սկսված իրականացվել են ակադեմիական և կիրառական տարբեր հետազոտություններ երիտասարդության[13], երիտասարդների հիմնախնդիրների[14], երիտասարդների ընկալումների վերաբերյալ[15]: Իսկ 2013-2019թթ Հայաստանում գործել է Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտը, որը, հանդիսանալով փաստարկված երիտասարդական քաղաքականության միակ

---

[10] Տե՛ս **Giddens A**. Sociology, Revised and updated with Philip W. Sutton polity, 2009, 6th edition, Polity Press, p.1033.

[11] Տե՛ս **Spenser G**. Essays: Scientific, Political, and Speculative. Trans. from Engl. by N. A. Rubakina. Vol. 1. Minsk, Sovremen. literator. 1999.

[12] Տե՛**ս Sorokin P.** A. War and Post-War Changes in Social Stratifications of the Euro-American Population, American Sociological Review, Vol. 10, No. 2, 1944 Annual Meeting Papers (Apr., 1945), pp. 294-303.

[13] Տե՛ս **Ղազարյան** Դ. Հայաստանի երիտասարդների ձգտումները և ակնկալիքները: Զեկույց / Դ. Ղազարյան, Եր.: ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի Հայաստանի գրասենյակ, 2012. – 200 էջ, **Մանուկյան** Ս. Հայաստանի երիտասարդությունը և քաղաքական գործընթացները // 21-րդ ԴԱՐ. 2016. №1 (65), Անկախության սերունդ, Հետազոտություն երիտասարդների շրջանում Հայաստան 2016.- Եր.: Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ, 2016, 232 էջ:

[14] Տե՛ս **Atanesyan** A. and **Mkrtichyan** A. Youth Perceptions of the War in Ukraine and its Possible Consequences (On the Case of Armenian Youth in Yerevan). Journal of Sociology: Bulletin of Yerevan University, 14(1 (37)), 2023, 7-28:

[15] Տե՛ս **Атанесян** А., **Мелконян** Н., **Искандарян** Л. and **Хачикян** А. Երևանաբնակ երիտասարդության ընկալումները Եվրոպայի եվրոպացիների մասին. 21-րդ ԴԱՐ, (6 (76)), 2017, 99-117:

ինստիտուցիոնալ մեխանիզմը, իրականացնում էր հայաստանյան երիտասարդության վերաբերյալ սոցիոլոգիական հետազոտություններ [16]:

Անհատի սոցիալական հարմարման դասակարգման հարցերը խորապես դիտարկվել են հայ գիտնականների կողմից: Է. Ս. Մարգարյանը հասարակության մշակութաբանական մոտեցման մշակման շրջանակներում անդրադարձել է մշակույթի ադապտիվ մեկնաբանմանը: Համարվելով հայկական մշակութաբանական դպրոցի հիմնադիրը՝ նա առաջարկել է հասարակության՝ որպես ունիվերսալ հարմարվող-հարմարեցնող համակարգի հայեցակարգը, որը հանդիսանում է նրա մշակութաբանական տեսության անկյունաքարային հասկացությունը: Ըստ Է. Ս. Մարգարյանի, «մարդկային հասարակությունը պետք է վերագրել հարմարվող-հարմարեցնող համակարգերի առանձնահատուկ դասին, որը որակապես տարբերվում է պարզապես հարմարվող համակարգերից՝ ներկայացված կենսաբանական կյանքի տարբեր ձևերով»[17]:

Ա.Ա. Նալչաջյանի աշխատություններում ներկայացված են հարմարման հիմնական տեսակները: Նալչաջյանը նշում է, որ «միջավայրի փոխակերպման աճող տեմպերն ու մասշտաբները փոփոխվող միջավայրին մարդու հարմարեցման խնդիրը առանցքային դիրք է զբաղեցնում համաշխարհային գիտության կողմից ուսումնասիրության տեսանկյունից: Գիտական և տեխնոլոգիական առաջընթացը համակարգված կերպով ընդլայնում է մարդու «հարմարվողական» (սոմատիկ և հոգեկան) ռեսուրսների հանդեպ պահանջները»[18]:

Չնայած բազմաթիվ տեսական և էմպիրիկ ուսումնասիրությունների, երիտասարդների սոցիալական հարմարման խնդիրն արդիական է. հետազոտողների շրջանում այս երևույթը հասկանալու միասնական մոտեցում չկա: Միևնույն ժամանակ, միջավայրային անդադար փոփոխություններին երիտասարդների՝ որպես սոցիալական խմբի սոցիալական հարմարումը մշտապես արդիական և շարունակական գործընթաց է: Սա հատկապես արդիական է ներկայիս Հայաստանում՝ 2020թ. 44-օրյա պատերազմից հետո, երբ առաջ են եկել իրականությանը հարմարվելու առանձնահատուկ դժվարություններ:

Ատենախոսությունն ուղղված է սոցիալական հարմարման տեսական մոտեցումների և երիտասարդական ուսումնասիրությունների հայեցակարգում երիտասարդների սոցիալական հարմարման հիմնախնդրի և պրակտիկաների վերլուծությանը հետպատերազմյան Հայաստանի համատեքստում:

---

[16] Տե՛ս ՀՀ երիտասարդների զբաղվածության հիմնախնդիրները, Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն ՊՈԱԿ, Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտ, Երևան, 2014:

[17] Տե՛ս **Маркарян Э. С.** О генезисе человеческой деятельности и культуры, Ереван, 1973, էջ 80—81:

[18] Տե՛ս **Налчаджян А.А**. Социально-психическая адаптация личности (формы, механизмы и стратегии) – Ереван: Издательство АН Армянской ССР. 1988 – 270 с.

Հետազոտության **նպատակն է՝** բացահայտել ՀՀ երիտասարդների սոցիալական հարմարման պրակտիկաները հետպատերազմյան Հայաստանում:

Հետազոտական **խնդիրներն** են՝

1. Վերհանել, բացահայտել ՀՀ երիտասարդների սոցիալական հարմարման գործընթացների էությունը և բովանդակությունը հետպատերազմյան իրավիճակում,
2. վերհանել հիմնական գործոնների ազդեցությունը երիտասարդների սոցիալական հարմարման վրա,
3. բացահայտել երիտասարդների հիմնական բնութագրիչները նախապատերազմյան և հետպատերազմյան Հայաստանում,
4. նկարագրել հետպատերազմյան Հայաստանում երիտասարդների սոցիալական հարմարման պրակտիկաները,
5. մշակել երիտասարդների անկախությունը և սոցիալական հարմարման մակարդակը գնահատող չափման համալիր մոդել և տալ երիտասարդների և հարմարման պրակտիկաների տիպաբանությունն ըստ այդ մոդելի,
6. ցույց տալ հետպատերազմյան պայմաններում երիտասարդների սոցիալական հարմարման դժվարությունները, ռիսկերը, մարտահրավերները,
7. հետազոտության արդյունքների հիման վրա ներկայացնել երիտասարդներին ուղղված քաղաքականության մշակման առաջարկություններ:

Հետազոտության օբյեկտը՝ Հայաստանի Հանրապետության 18-35 տարեկան երիտասարդ բնակիչները:

Հետազոտության առարկան՝ Հայաստանի Հանրապետության երիտասարդների սոցիալական հարմարման պրակտիկաները, դրանց վրա ազդող գործոնները:

Ատենախոսության տեսական և մեթոդաբանական հիմքերը: Հետազոտությունն իրականացվել է երիտասարդության և հարմարման սոցիոլոգիայի՝ որպես միջին մակարդակի տեսությունների շրջանակներում: Ատենախոսության տեսական հիմք են հանդիսացել հարմարման սոցիոլոգիայի տեսական մոտեցումները՝ Պարսոնսի, Մերտոնի, Կորելի կողմից մշակված հարմարման սոցիոլոգիական հայեցակարգերը, որոնց շրջանակներում սոցիալական հարմարումը դիտարկվում է որպես երկկողմանի գործընթաց՝ որպես արձագանք սոցիալական միջավայրի փոփոխություններին, ինչպես նաև Էլդերի և Քասփիի, Նարոցկիի և Բեսնիերի մոտեցումները, ըստ որոնց հարմարման պրակտիկաների ընտրության վրա ազդող գործոնների շարքում նշանակալի է կոնկրետ ժամանակի ազդեցությունը: Ատենախոսությունը հիմնված է երիտասարդական ուսումնասիրությունների Առնետի, Ֆուռլոնգի, Վինի, Վուդմանի, Հարեվանի, Մանզոնիի մոտեցումների վրա: Ատենախոսության համար հիմք են հանդիսացել նաև հետպատերազմյան հասարակությունների ուսումնասիրման

տեսամեթոդաբանական մոտեցումները ներկայացնող հեղինակներ՝ Բոլթենի, Պալմբերգերի, Հրոմաջիչի, Զուբկովայի հետազոտությունները:

Ատենախոսական հետազոտության շրջանակներում կիրառվել են տեղեկատվության հավաքագրման որակական և քանակական մեթոդներ.

1. ՀՀ-ում իրականացված մի շարք հետազոտությունների, պաշտոնական վիճակագրական տվյալների երկրորդային վերլուծություն,
2. ստանդարտացված դեմ առ դեմ հարցազրույցներ երիտասարդների շրջանում,
3. խորին հարցազրույցներ երիտասարդների, փորձագետների և առանցքային տեղեկատուների հետ,
4. ֆոկուս-խմբային քննարկումներ երիտասարդների հետ:

Ատենախոսական հետազոտության **էմպիրիկ հիմքերն** են՝

- 2022 թվականին ՀՀ-ում հեղինակի անմիջական մասնակցությամբ իրականացված քանակական հետազոտության ընթացքում հավաքված սոցիոլոգիական տվյալները (ընտրանքի ծավալը՝ 625 երիտասարդ)
- 2022 թվականին հեղինակի անմիջական մասնակցությամբ ՀՀ-ում իրականացրած ստանդարտացված հարցազրույցների արդյունքները (ընտրանքի ծավալը՝ 1200 երիտասարդ),
- 2022 թվականին հեղինակի անմիջական մասնակցությամբ ՀՀ քաղաքային և գյուղական մի շարք համայնքներում իրականացված սոցիոլոգիական որակական հետազոտության արդյունքները,
- Մինչ 2020թ. արցախյան պատերազմը Հայաստանում իրականացված երիտասարդական ուսումնասիրությունները՝ որպես տեղեկատվության աղբյուր հետպատերազմյան իրականության և նախապատերազմյան իրականության համեմատության համար, այդ թվում՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակումները և հետազոտությունների տվյալները:

Ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսությունում առկա են գիտական նորույթ հանդիսացող մոտեցումներ, գաղափարներ, տեսական ընդհանրացումներ և առաջարկություններ: Մասնավորապես, ատենախոսության շրջանակներում՝

- դուրս են բերվել հետպատերազմյան Հայաստանում երիտասարդների հիմնական բնութագրիչները,
- վեր են հանվել հետպատերազմյան Հայաստանում երիտասարդների սոցիալական հարմարման պրակտիկաները և այդ պրակտիկաների առանձնահատկությունները սոցիալ-տնտեսական, սոցիալ-քաղաքական և սոցիալ-մշակութային ոլորտներում,
- մշակվել է երիտասարդների անկախության չափման ցուցիչների համակարգ՝ երիտասարդների անկախության համաթիվ (ԵԱՀ/YII)[19] և վեր են հանվել ԵԱՀ

[19] Երիտասարդների անկախության համաթիվ (Youth Independence Index)

կիրառման հուսալիությունը, ճանաչողական և կիրառական հնարավորությունները, դուրս են բերվել հայաստանյան երիտասարդների անկախության առանձնահատկությունները,

- վեր են հանվել սոցիալական հարմարման վրա ազդող հիմնական գործոնները; ապացուցվել է, որ անկախության գործոնը ամենանշանակալի գործոնն է հանդիսանում երիտասարդների հարմարման պրակտիկաների ընտրության համար,
- երիտասարդների անկախության համաթվի չափման մեթոդաբանության և սոցիալական հարմարման պրակտիկաների փոխառնչության վերլուծության միջոցով վերհանվել և մշակվել է հայաստանյան երիտասարդության տիպաբանությունը,
- ներկայացվել են երիտասարդների հարմարման գործընթացների, այդ թվում՝ միգրացիոն միտումների վերաբերյալ կանխատեսումներ, որոնք թույլ են տալիս կանխորոշել հայաստանյան հասարակության ժողովրդագրական և այլ փոխակերպումները:

Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը: Հետազոտությունը կարող է հիմք հանդիսանալ երիտասարդության սոցիոլոգիայի ուսումնասիրման տիրույթի ընդլայնման, ներառյալ երիտասարդության անկախության չափման մոդելները, ինչպես նաև հարմարման սոցիոլոգիայում անկախության ցուցիչների ներմուծման համար: Հետազոտության վերլուծությունը, եզրակացությունները կարող են լայնորեն կիրառվել հետագա գիտական հետազոտություններում և այլ գիտական աշխատանքներում:

Հետազոտության արդյունքները կարող են գտնել իրենց կիրառումը կրթական գործընթացում և նոր դասընթացներում՝ որպես գործնական նյութեր դասախոսությունների և սեմինարների անցկացման համար: Հետազոտության արդյունքները կարևոր են օգտակար լինել հարմարման սոցիոլոգիայի, երիտասարդության սոցիոլոգիայի ընդլայնված կրթական ծրագրերի պատրաստման տեսանկյունից:

Հետազոտության արդյունքները կնպաստեն երիտասարդության սոցիոլոգիայի զարգացմանը և այդ բնագավառում գիտական և գործնական մշակումների աճին:

Հետազոտության արդյունքները օգտակար կարող են լինել սոցիոլոգիայի, մարդաբանության, ժողովրդագրության և այլ ոլորտի մասնագետների պատրաստման գործում:

Ատենախոսության մեջ մշակվել են Հայաստանում երիտասարդներին ուղղված պետական քաղաքականության միջոցառումների առաջարկներ, մեխանիզմներ՝ ուղղված երիտասարդների խոցելի խմբերին և խոցելի ոլորտներին: Հետազոտության արդյունքները կարող են հիմք հանդիսանալ Հայաստանում և հետպատերազմյան երկրներում երիտասարդության ոլորտի հանրային քաղաքականության մշակման, երիտասարդական աշխատանքի, երիտասարդական ծրագրերի նախագծման, ինչպես նաև արդյունավետության գնահատման համար:

Ուսումնասիրության արդյունքներն օգտակար կարող են լինել երիտասարդության ոլորտի դերակատարների, մասնագետների համար, ովքեր աշխատում են երիտասարդների հետ, հետաքրքրված են երիտասարդների խնդիրներով, ինչպես նաև այն մասնագետների համար, ովքեր զբաղվում են խոցելի խմբերի ներկայացուցիչների խնդիրներով՝ հետպատերազմյան պայմաններում պատերազմի մասնակիցների բնականոն հարմարեցումն ապահովելու նպատակով:

Ատենախոսության փորձաքննությունը: Ատենախոսությունը քննարկվել է ԵՊՀ կիրառական սոցիոլոգիայի ամբիոնում, ինչպես նաև.

- 2023 թ. նոյեմբերին Երևանում կայացած «Արցախ 2020-2023. Սոցիալական հիմնախնդիրները և սոցիալական աշխատողի քաղաք դասերը» գիտաժողովում ներկայացված զեկույցում,
- 2023 թ. սեպտեմբերին Իտալիայում Եվրոպական սոցիոլոգիական ասոցիացիայի կողմից կազմակերպված "Youth in the post-pandemic: from experiences of inequality to new opportunities for solidarity" միջազգային գիտաժողովում ներկայացված զեկույցում:

Ատենախոսության հիմնական գաղափարները և դրույթները ներկայացված են գիտական հանդեսներում հրատարակված 12 հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածական մասից, չորս գլուխներից (11 ենթագլուխ), եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության ծավալը կազմում է 166 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածությունում հիմնավորվում են թեմայի արդիականությունն ու հրատապությունը, ներկայացվում է թեմայի գիտական մշակվածության մակարդակը, առաջադրվում են աշխատանքի նպատակն ու խնդիրները, մեկնաբանվում են աշխատության մեթոդաբանական հիմքերը, հիմնավորվում է ատենախոսության գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին գլուխը՝ **«Հետպատերազմյան իրականությունը որպես սոցիոլոգիայի ուսումնասիրության տիրույթ»,** բաղկացած է երկու ենթագլուխներից:

Առաջին գլխի առաջին ենթագլխում՝ **«Հետպատերազմյան հասարակության վերաբերյալ սոցիոլոգիական մտքի առանձնահատկությունները»,** ներկայացված է հետպատերազմյան հասարակությունները ուսումնասիրող սոցիոլոգիական տեսությունները և մոտեցումները, վերհանվում են հետպատերազմյան հասարակության հիմնական բնութագրիչները և մարտահրավերները, քննարկվում են հետպատերազմյան հասարակությունների առանձնահատկությունները (Բոլթեն, Պալմբերգեր, Հրոմաջիչ, Զուբկովա): Հետպատերազմյան հասարակությունների վերաբերյալ ուսումնասիրություններին անդրադառնալիս, քննարկվում է նախկին Հարավսլավիայում, հետխորհրդային, բրիտանական, հայաստանյան հետպատերազմյան հասարակությունների փորձառությունները: Ամփոփելով վերլուծությունը՝ հեղինակի կողմից առանձնացվել են այն բնութագրերը, որոնք բնորոշ են հետպատերազմյան հասարակություններին.

- ժողովրդագրական խնդիրներ, քանի որ ցանկացած պատերազմ հանգեցնում է մարդկային կորուստների,
- հետպատերազմյան հասարակության խնդիրների շարքում են նաև երեխաների և երիտասարդների առողջական վատ վիճակը, հոգեկան առողջության խնդիրները,
- հետպատերազմյան հասարակության սոցիալական բաղադրությունը նման չէ «նորմալ» հասարակությունների կառուցվածքին՝ այդ կառուցվածքի բնույթը որոշում են ոչ թե ավանդական կատեգորիաները՝ գյուղաբնակներ, քաղաքաբնակներ և այլն, այլ պատերազմի ժամանակ ձևավորված սոցիումները, որոնց թվում են պատերազմի մասնակիցները,
- հետպատերազմյան հասարակությունները բախվում են պատերազմի մասնակիցների սոցիալ-հոգեբանական խնդիրների սրացմանը՝ բնակարանային պայմաններ, աշխատանք, առողջական խնդիրներ, անօթևան երեխաներ,
- պատերազմներից հետո, հատկապես երկարատև պատերազմներից, մարդկանց մոտ ձևավորվում է «խաղաղության անհագ ցանկություն», ինչը կանխում է ցանկացած քաղաքական փոփոխություն և ցնցումներ,
- հակամարտությունները նվազեցնում են սոցիալական համախմբվածության մակարդակը, կոնֆլիկտները վնասում են և՛ ուղղահայաց (քաղաքական

վստահություն), և՛ հորիզոնական (սոցիալական վստահություն) վստահությանը հասարակության մեջ[20]:

Հեղինակը եզրակացնում է, որ հետպատերազմյան հասարակությունները տարբերվում են հասարակությունների «նորմալ» վիճակից, ինչը արդիական է դարձնում տարբեր խմբերի սոցիալական հարմարման առանձնահատկությունների ուսումնասիրությունը:

Առաջին գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Երիտասարդները հետպատերազմյան հասարակություններում»**, վերլուծված է երիտասարդների դերը հետպատերազմյան հասարակություններում, նրանց կարգավիճակի փոփոխությունները՝ արտացոլված Բոլթենի, Պալմբերգերի, Կոմերտոնի, Հրոմաջիչի, Զուբկովայի ուսումնասիրություններում: Քննարկվում է կոնֆլիկտների, պատերազմների և անվտանգության հարցերի ուսումնասիրման տեղը երիտասարդական ուսումնասիրությունների պարադիգմայում՝ եզրակացնելով, որ չնայած նախնական և զարգացման տարբեր փուլերում այս թեմաները կենտրոնական չեն եղել, սակայն այդ հարցերի կարևորությունն այժմ ակնհայտ է առավել քան երբևէ[21]:

Ամփոփելով վերլուծությունը՝ հեղինակի կողմից առանձնացվել են հետպատերազմյան հասարակություններում երիտասարդների հիմնական բնութագիչները.

- երիտասարդների ինքնուրույնության և անկախության ձգտումները,
- երիտասարդների երկակի կյանք վարելու միտումը,
- երիտասարդների ոչ ֆորմալ խմբերի ձևավորման միտումը,
- տեղի ունեցած զինված հակամարտությունների ազդեցությունը երիտասարդների վրա հիմնականում դրսևորվում է զբաղվածության փոփոխություններով,
- երիտասարդների շրջանում տարածված է խուսափելու, լռելու՝ վարքի մոդելը, պրակտիկան,
- պատերազմից հետո, ապրելով ոչ համախմբված միջավայրում, երիտասարդների միջև զգալի սոցիալական անջրպետ կարող է ստեղծվել, ինչի արդյունքում երիտասարդությունը կարող է օտարել իրեն պետական ինստիտուտներից, քիչ հետաքրքրված լինել քաղաքական, կուսակցական գործունեությամբ,
- երիտասարդներին «պատերազմի սերունդ» և «կորուսյալ սերունդ» սահմանելը:

Արված վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ հետպատերազմյան իրավիճակում երիտասարդների հարմարման հարցերի ուսումնասիրությունը արդիական է հայկական իրականությունում, քանի որ 2020թ. պատերազմը, դրան հաջորդած շարունակական սրացումները, 2023թ. ցավալի իրադարձությունները պատերազմը մշտապես արդի և անվտանգային սպառնալիք են դարձնում

---

[20] Տե՛ս Fiedler C., Rohles C, Social Cohesion After Armed Conflict a Literature Review, Bonn 2021, էջ 3:

[21] Տե՛ս **Furlong A.** Future agendas in the sociology of youth, Youth Studies Australia, University of Glasgow, September 2011

հայաստանյան հասարակության համար: Այս հանգամանքը կարևոր է Հայաստանի՝ որպես հետպատերազմյան հասարակության դիտարկման և ուսումնասիրման մեթոդաբանական տեսանկյունից, քանի որ, ի տարբերություն հետպատերազմյան այն հասարակություններին, որտեղ զինված կոնֆլիկտը ունեցել է վերջնական կարգավորում, Հայաստանում լայնածավալ պատերազմին հաջորդող սահմանային շարունակակական լարվածությունը պատերազմը արդիականացնում է, և դրանով է առանձնահատուկ նաև հետպատերազմյան հայաստանյան հասարակությունը:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ **«Երիտասարդները սոցիոլոգիայի ուսումնասիրության օբյեկտ»**, բաղկացած է երեք ենթագլուխներից:

Առաջին գլխի առաջին ենթագլխում՝ **«Երիտասարդների որպես սոցիալական խմբի դերը հասարակության մեջ»**, ներկայացված է «երիտասարդություն» հասկացության ծագումը, ուսումնասիրող հիմնական մոտեցումները: Երիտասարդները՝ որպես սոցիալական խումբ, ուսումնասիրվել և ուսումնասիրվում են տարբեր գիտակարգերի կողմից՝ հոգեբանություն, մարդաբանություն, սոցիոլոգիա, տնտեսագիտություն, մանկավարժություն և այլն:

Հասարակության մեջ երիտասարդների դերի կարևորումը կապված է արդյունաբերականացման գործընթացի հետ, որը սկիզբ է առել 18-րդ դարում, ըստ որի երիտասարդությունը ժամանակակից արդյունաբերական քաղաքի արդյունքն է, որտեղ մեծ թվով երիտասարդներ դիտվում են որպես աշխատուժ[22]:

Սոցիոլոգիական և հասարակագիտական գրականության մեջ բացակայում է երիտասարդի, երիտասարդության սահմանման համընդհանուր և միասնական մոտեցումը: Վերլուծության արդյունքում հիմնավորվել է, որ ըստ երիտասարդների սահմանման՝ երիտասարդների վերաբերյալ սոցիալական տեսությունները կարելի է բաժանել երեք հիմնական ուղղությունների և մոտեցումների՝ տեսություններ, որոնք դիտարկում են երիտասարդությունը որպես՝ **կյանքի փուլ** (Ֆուռլոնգ, Վին, Վուդման, Քոութ), **սոցիալական խումբ** (Յոնես, Ռայթ) և **սերունդ** (Մանհեյմ, Շտրաուս և Հաու): Քննարկելով այս մոտեցումները՝ հեղինակը եզրակացնում է, որ որպես ընդհանրական սահմանում երիտասարդերին կարելի է սահմանել որպես մանկության կախվածությունից մեծահասակության անկախության անցման մեջ գտնվող խումբ:

Սոցիոլոգիական տեսանկյունից կարևոր է նկարագրել, թե որոնք են երիտասարդների անկախության ցուցանիշները: Սոցիոլոգիական գրականության մեջ առանձնացնում են երիտասարդների անկախ կյանք վարելու հետևյալ ցուցանիշները՝

- ֆորմալ կրթության ավարտելը,
- մուտքը աշխատաշուկա,

---

[22] Տե՛ս **Aries P.** Centuries of Childhood. New York: Vintage Books., Gillis, J. (1974) Youth and History: Tradition and Change in European Age Relations 1770-Present. New York. 1962, Academic Press

- ծնողական տնից հեռանալը,
- ամուսնանալը,
- ծնող դառնալը[23]:

Երիտասարդների կենսափորձի հետագծի երկարատև և խորքային ուսումնասիրությունները փաստեցին, որ կրթությունը կարող է շարունակվել ողջ կյանքի ընթացքում, ընտանիքի ձևավորման հապաղումը կրում է սոցիալ-մշակութային գործոնների ազդեցությունը, հետևաբար երիտասարդների անկախությունը ևս պետք է սահմանվի և չափվի հաշվի առնելով այս խորքային վերափոխումները: Հեղինակը ուսումնասիրել և մշակել է երիտասարդների անկախության չափման մեթոդաբանություն՝ հիմնված չորս բաղադրիչների վրա՝ մտավոր անկախություն, ֆինանսական անկախություն, տնտեսական և առօրյա անկախություն:

Երկրորդ ենթագլխում՝ **«Երիտասարդության մեկնաբանումը երիտասարդության սոցիոլոգիայի տեսանկյունից»,** հիմնվելով երիտասարդների հասարակության մեջ դերի վերլուծությունների վրա, վերլուծվել է երիտասարդների՝ որպես հատուկ սոցիալական խմբի հիմնական բնութագրերը և առանձնահատկությունները, շեշտադրվել են երիտասարդների հետազոտությունների առանցքային թեմաները:

Առանձնացվել և ներկայացվել են երիտասարդական ուսումնասիրությունների համար տեսական հիմք հանդիսացող հիմնական տեսաբանները և մոտեցումները, որոնք անդրադառնում են երիտասարդների առանձնահատկություններին և նշանակալի ազդեցություն են ունեցել երիտասարդության սոցիոլոգիայի ձևավորման և զարգացման վրա.

- անձի զարգացման հոգեբանական ուղղությունները՝ Ֆրոյդի հոգեվերլուծությունը, Ադլերի, Յունգի, Էրիքսոնի հոգեդինամիկ մոտեցումները,
- Սկինների վարքաբանական մոտեցումը,
- Բանդուրայի սոցիալական ուսուցման տեսությունը,
- Բուգենթալի, Մասլոուի մարդասիրական մոտեցումը,
- Պիաժեի, Վիգոտսկու ճանաչողական մոտեցման տեսությունները,
- Բոուլբիի կապվածության տեսությունը:
- Բեկի՝ ռիսկի հասարակության և Գիդենսի՝ արդիականության վերաբերյալ տեսական մոտեցումները:

Մյուս տեսությունները, որոնք արդիական են երիտասարդական ուսումնասիրությունների համար, ներառում են սոցիալական կապիտալի, սոցիալական ցանցերի վերաբերյալ տեսությունները, փոփոխության տեսությունը և

[23] Տե՛ս **Manzoni A.** Conceptualizing and measuring youth independence multidimensionally in the United States. Acta Sociologica, 59(4), 2016, էջ 362–377:

բազմամասնագիտական այլ մոտեցումներ (քաղաքագիտություն, միջմշակութային ուսումնասիրություններ)[24]:

Սոցիոլոգիական տեսանկյունից երիտասարդները դիտարկվում են որպես ռիսկի, անորոշության փուլում գտնվող խումբ, իսկ ռիսկը մոդեռնիզմի տեսության անկյունաքարային հասկացությունն է, որը կիրառվում է երիտասարդության վերաբերյալ սոցիոլոգիական հետազոտություններում:

Հեղինակը ներկայացրել է նաև հայ սոցիոլոգիական միտքը (Ռաֆֆի, Լեո, Արծրունի), որը անդրադարձել է հայ երիտասարդների հիմնախնդիրներին, այդ թվում ժամանակակից սոցիոլոգիական հետազոտություններին:

Երրորդ ենթագլուխը՝ **«Հետպատերազմյան հայաստանյան երիտասարդների ընդհանուր բնութագիրը»,** անդրադառնում է մինչպատերազմյան և հետպատերազմյան հայաստանյան երիտասարդների ընդհանուր նկարագրին, այդ թվում՝ ժողովրդագրություն, զբաղվածություն, կրթություն, առողջապահություն, քաղաքացիական և քաղաքական մասնակցություն: Հեղինակը վերլուծել է հայաստանյան երիտասարդների բնութագրիչները ժողովրդագրական, կրթական, առողջապահական, քաղաքացիական մասնակցությանը վերաբերող ցուցանիշների հիման վրա: Հեղինակը եզրակացնում է, որ մինչ պատերազմը հայաստանյան երիտասարդները բախվում էին մի շարք մարտահրավերների հետ՝ գործազրկություն, առողջական խնդիրներ, կրթության որակ, սակայն պատերազմից հետո այս մարտահրավերները ավելի սրվեցին և ավելացան նոր խնդիրներ՝ հետպատերազմյան իրականության անորոշությունը, նոր պատերազմի մշտական վտանգը, հոգեկան առողջության խնդիրները, կրթության իրավունքի լիարժեք իրացումը, ինչը ստիպում է երիտասարդներին մշտապես հարմարվել նոր իրողություններին, շարունակական անորոշությանը, հետևաբար սոցիալական հարմարման պրակտիկաների ուսումնասիրման անհրաժեշտություն է առաջանում:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ **«Սոցիալական հարմարումը որպես սոցիոլոգիական հիմնախնդիր»**, բաղկացած է երեք ենթագլուխներից:

Երրորդ գլխի առաջին ենթագլխում՝ **«Սոցիալական հարմարման իմաստավորումը և մեկնաբանումը սոցիոլոգիայում»**, ներկայացվում են հարմարման հասկացությունը մեկնաբանող հիմնական մոտեցումները: Հեղինակը ներկայացնում է հարմարման մեկնաբանման հոգեբանական, փիլիսոփայական, վարքաբանական և սոցիոլոգիական մոտեցումները: Հոգեբանական մոտեցումները շեշտադրում են հարմարումը՝ որպես մարդու և անընդհատ փոփոխվող աշխարհի միջև չդադարող փոխազդեցության գործընթաց (Ժ. Պիաժե): Հարմարման հասկացությունը լայնորեն քննարկվել է փիլիսոփայության շրջանակներում. գիտությունը կամ գիտության զարգացումը համարվում է շրջակա միջավայրին մարդու առավել լավ հարմարվելու արդյունք (Կ. Պոպերը): Վարքաբանական ուղղությունը արդյունավետ

[24] Տե՛ս Chisholm L., Kovacheva, S., Merico M. EUROPEAN YOUTH STUDIES Integrating research, policy and practice, Deliverable 7.1 – M.A. EYS Reader, 2011, Innsbruck.

հարմարում է սահմանում այն հարմարվողականությունը, որին հասնելուց հետո անհատը բավարարում է հասարակության նվազագույն պահանջներն ու ակնկալիքները (Լ. Ֆիլիպս): «Սոցիալական հարմարում» հասկացությունը սոցիոլոգիական գիտելիքում շրջանառության մեջ է մտել և լայնորեն կիրառվել է անհատի և հասարակության փոխհարաբերությունների խնդիրները դիտարկելիս (Թ. Պարսոնս, Ռ. Մերտոն, Է. Թոֆլեր):

Ատենախոսության երրորդ գլխի երկրորդ ենթագլուխը՝ **«Սոցիալական հարմարման տիպաբանությունը և վերլուծության առանձնահատկությունները»,** նվիրված է սոցիալական հարմարման սահմանման, տիպաբանության տեսական հիմքերի վերհանմանը, ինչպես նաև սոցիալական հարմարման հետազոտման մեթոդաբանական հիմքերին և հիմնախնդիրներին:

Սոցիալական հարմարումը սոցիոլոգիական գրականության դիտարկվում է որպես գործընթաց և որպես վիճակ: Սոցիալական հարմարումը որպես գործընթաց և վիճակ բնութագրվում է բազմասուբյեկտայնությամբ և բազմաոլորտայնությամբ[25]:

Սոցիալական հարմարումը որպես **գործընթաց** նշանակում է՝

- գործընթաց, որի միջոցով սոցիալական համակարգը գալիս է շրջակա միջավայրի հետ համապատասխանության վիճակի[26]:
- գործընթաց՝ ընդունելու և կատարելու հասարակության և ուրիշների հետ անձնական հարաբերություններով պայմանավորված պահանջները առանց ավելորդ լարվածության և դիմադրության»[27]:
- գործընթաց, որի միջոցով արձագանքելով փոփոխված միջավայրին՝ ստեղծվում և մշակվում են վարքագծի ձևափոխված կարծրատիպեր:
- գործընթաց, որով անհատները և խմբերը փոփոխում են իրենց վարքագիծը նպատակին հասնելու կամ պարզապես ստատուս քվոյի պահպանման համար»[28]:

Սոցիալական հարմարումը որպես **վիճակ** սահմանվում է որպես՝

- սոցիալական համակարգի և նրա միջավայրի միջև ստատիկ հավասարակշռություն, որի դեպքում արձագանքի փոփոխությանը հանգեցնող խթանի փոփոխություն առկա չէ, չկա չբավարարված կարիք և համակարգի բոլոր գործառույթներն իրականացվում են «նորմալ» ռեժիմով: Նման լիարժեք և ամբողջական հարմարում երբեք չի լինում, այլ ծառայում է որպես «իդեալական տիպ», որպես տեսական կառուցվածք և վերլուծական միավոր՝ հարմարման մասնակի աստիճանների ուսումնասիրման համար:

---

[25] Տե՛ս **Корел Л.В.** Социология адаптации: вопросы теории, методологии и методики, Новосибирск, 2005. - 424 с., էջ 34

[26] Տե՛ս Seligman E.R., Johnson A. (Eds.). Encyclopaedia of the Social Sciences. — N.Y.: McMillan Co., 1967. — Vol. 1: Adaptation, էջ 403:

[27] Տե՛ս English H.B., English A.C. Comprehensive Dictionary of Psychological and Psychoanalitical Terms: A Guide to Usage. — Longmans, 1958., էջ 11:

[28] Տե՛ս **Bennet J.W.** The Ecological Transition: Cultural Anthropology and Human Adaptation. — N.Y.: Pergamon Press, 1976, էջ 269:

- միջավայրի հետ ներդաշնակ հարաբերությունների վիճակ, որտեղ մարդը կարող է ստանալ իր կարիքների մեծ մասի բավարարումը և բավականին լավ կատարել ֆիզիկական և սոցիալական միջավայրի կողմից իրեն պարտադրված պահանջները[29]:

Հեղինակը եզրակացնում է, որ **սոցիալական հարմարումը** կարելի է սահմանել որպես սոցիալական համակարգի ներքին և արտաքին փոփոխություններին արձագանքում, այդ փոփոխությունների յուրացում, ընտելացում համակարգի, այնպես էլ համակարգի կողմից միջավայրի փոփոխությունների, սոցիալական պրակտիկաների, արժեքների, ինչպես նաև գործառույթների և կառուցվածքի փոփոխության ճանապարհով:

Հեղինակը ներկայացնում է նաև սոցիալական հարմարման տեսակները ըստ տարբեր հիմքերի՝ ակտիվ-պասիվ հարմարում, խորը-մակերեսային հարմարում, ամբողջական-մասնակի հարմարում, ադեկվատ-ոչ ադեկվատ հարմարում:

Երրորդ գլխի երրորդ ենթագլխում՝ **«Երիտասարդների ուսումնասիրությունների առանձնահատկությունները սոցիալական հարմարման ուսումնասիրության համատեքստում»** ներկայացված է, թե ինչպիսի առանձնահատկություններ ունեն երիտասարդների սոցիալական հարմարման վերաբերյալ հետազոտությունները: Երիտասարդների սոցիալական հարմարման հիմնախնդիրը բազմամակարդակ գործընթաց է՝ պայմանավորված կյանքի փորձի համեմատաբար դեռևս ավելի քիչ տևողությամբ, տարիքային զարգացման առանձնահատկություններով և միևնույն ժամանակ արտաքին աշխարհի ազդակներով: Հիմնախնդիրը բովանդակային նոր դրսևորումներ է ստանում նաև հասարակական լուրջ փոխակերպումների, ցնցումների և ճգնաժամերի ընթացքում, հետևաբար պահանջում ուսումնասիրության տեսա-մեթոդաբանական նոր մոտեցումներ, երիտասարդներին որպես ակտիվ դերակատար դիտարկում, երիտասարդների մասնակցությամբ հետազոտություններում էթիկական չափանիշների խիստ պահպանում (ինքնավարություն, արդարություն, ոչ չարամտությանը, բարերարություն և այլն): Երիտասարդական ուսումնասիրությունների առանձնահատկությունների շարքում շեշտադրվում է տեսակետը, ըստ որի նման հետազոտությունները ոչ թե պետք է քննարկեն այն հարցը, թե լինել «քանակական», թե «որակական», այլ դրանք պետք է լինեն զգայուն երիտասարդների համար և մասնակցային՝ «պետք է ոչ թե երիտասարդների մասին, այլ երիտասարդների հետ իրականացնել հետազոտություն»՝ կիրառելով նաև նորարարական մեթոդներ:

Չորրորդ գլուխը՝ **«ՀՀ երիտասարդների սոցիալական հարմարման պրակտիկաները հետպատերազմյան հայաստանում»,** ներկայացնում է հայաստանյան երիտասարդների սոցիալական հարմարման պրակտիկաները

---

[29] Տե՛ս **Корел Л.В.** Социология адаптации: вопросы теории, методологии и методики, Новосибирск, 2005. - 424 с., էջ 35:

հետպատերազմյան Հայաստանում՝ անդրադառնալով սոցիալ-տնտեսական, քաղաքական-քաղաքացիական, ինչպես նաև մշակութային ոլորտում երիտասարդների հարմարման պրակտիկաներին: Ըստ անկախության և հարմարման պրակտիկաների գործոնային վերլուծության՝ հեղինակը ներկայացրել է հայաստանյան երիտասարդների տիպաբանությունը: Չորրորդ գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից:

Չորրորդ գլխի առաջին ենթագլխում՝ «**Երիտասարդների սոցիալական հարմարման պրակտիկաների հետազոտության մեթոդաբանական և մեթոդական հիմքերը**», սահմանված են հետազոտության հիմնախնդիրը, նպատակը և խնդիրները, վարկածները, հիմնական հասկացությունները:

Հետազոտության խնդիրները լուծելու համար կիրառվել են տեղեկատվության հավաքագրման խառը մեթոդներ՝ քանակական և որակական.

1. *փվյալների երկրորդային վերլուծություն:* Վերլուծության մեջ ներառվել է երիտասարդների սոցիալական հարմարմանը վերաբերող «անձ-միջավայր» համակարգի համատեքստում փաստաթղթեր, ներառյալ ՀՀ առկա վիճակի, սոցիալական փոփոխությունների վիճակագրություն (ՀՀ Ժողովրդագրական պատկերը, Աշխատանքի շուկան Հայաստանում, ՀՀ Վիճակագրական Կոմիտեի այլ հրապարակումներ) և երիտասարդության վերաբերյալ գիտական և պրակտիկ հետազոտությունների զեկույցներ և վերլուծություններ, օրենսդրական դաշտի նկարագրություններ և այլն:

2. *սպանդարտացված դեմ առ դեմ հարցազրույցներ* երիտասարդների շրջանում: Հարցազրույցների արդյունքում վեր են հանվել հարմարման վրա ազդող գործոնները, փորձարկվել է երիտասարդների անկախության համաթվի չափման մոդելը, որի արդյունքում մշակվել և վերլուծվել է հայաստանյան երիտասարդների տիպաբանությունը: Քանակակական հարցմանը մասնակցել է 18-35 տարեկան ՀՀ **625 երիտասարդ**: Կիրառվել է պատահական շերտավորված քառաստիճան կլաստերային ընտրանք ՝ ընտրվել է բնակավայրը, փողոցը, տնային տնտեսությունը և հարցվողը: Առաջին աստիճանում ընտրության միավորը բնակավայրն է: Յուրաքանչյուր շերտից բնակավայրի ընտրությունն իրականացվել է հավանականային ընտրանքի միջոցով: Հաջորդ աստիճանում յուրաքանչյուր բնակավայրում պարզ հավանականային ընտրանքի միջոցով ընտրվել են երթուղու սկզբնակետերը՝ որպես ընտրանքի հիմք հանդես է եկել ՀՀ բնակչության հասցեների ցուցակը: Երրորդ աստիճանում ընտրվել է տնային տնտեսությունը: Յուրաքանչյուր երթուղում համակարգված հավանականային ընտրանքի միջոցով ընտրվել է բնակարանը կամ տունը: Տնային տնտեսությունում 18-35 տարեկան մեկից ավելի հարցվողի ընտրության դեպքում կիրառվել է «ամենամոտ ծննդյան ամսաթվով» տեխնիկան: Իրականացվել է ներկայացուցչական ընտրանք (0,05-ից ոչ բարձր ընտրանքի սահմանային սխալով 0,95 նշանակալիության աստիճանի համար) river-sample տեխնիկայի օգնությամբ, որտեղ գլխավոր համախմբություն է հանդիսանում ՀՀ 18-35 տարիքային խմբի առկա հայաստանաբնակ երիտասարդ բնակչությունը:

3. *խորին հարցազրույցներ փորձագետների* և *առանցքային տեղեկատուների, երիտասարդների հետ*՝ երիտասարդների սոցիալական հարմարման պրակտիկաների վերհանման նպատակով: Փորձագիտական հարցման օգնությամբ նաև վերհանվել են գործնական առաջարկներ ուղղված երիտասարդական պետական քաղաքականության մշակմանը: Իրականացվել է տասներկու խորին հարցազրույց առանցքային տեղեկատուների և վեց փորձագիտական հարցազրույց:

4. *ֆոկուս-խմբային քննարկումներ երիտասարդների հետ,* որոնց հիմնական նպատակն է վերհանել երիտասարդների ստեղծված իրավիճակի ընկալումները, նրանց սպասումները, վարքագծի հնարավոր փոփոխությունները և իրավիճակին արձագանքելու հիմնական պրակտիկաները: Իրականացվել է ութ խմբային քննարկումներ երիտասարդների հետ:

Հեղինակի կողմից մշակվել և ներկայացվել է երիտասարդների անկախության չափման համալիր մոտեցում հիմնված չորս ցուցանիշների վրա՝ **երիտասարդների անկախության համաթիվը**: Հայաստանյան երիտասարդության անկախության չափումը թույլ է տալիս ստանալ երիտասարդության ամբողջական պատկերը, ինչպես նաև վերլուծել այդ պատկերը ժամանակի մեջ փոփոխությունների համատեքստում: Ակադեմիական գրականության ուսումնասիրությունը, նախորդ հետազոտության արդյունքների խորքային վիճակագրական վերլուծությունը (վիճակագրորեն նշանակալի ցուցիչներ), հետազոտության արդյունքների գործոնային վերլուծությունը հեղինակին թույլ են տվել առաջարկել այն հիմնական տիրույթները և դրանք ձևավորող փոփոխականները, որոնք բնորոշում են երիտասարդների անկախությունը և հետևաբար սույն հետազոտության շրջանակներում երիտասարդների անկախության համաթվի բաղադրիչ են հանդիսացել.

- **Ֆինանսական անկախությունը** երիտասարդների անկախության առանցքային բաղադրիչներից մեկն է: Այն արտացոլում է երիտասարդի, որպես անձի՝ կենսական անհրաժեշտության կարիքները հոգալու և իրեն ֆինանսապես ապահովելու կարողությունը: Այն նաև վկայում է երիտասարդի մոտ տեղեկացված տնտեսական որոշումներ կայացնելու և ռեսուրսների արդյունավետ կառավարման հմտության առկայության մասին: Ֆինանսական անկախությունը երիտասարդներին հնարավորություն է տալիս հասնելու իրենց նպատակներին՝ առանց արտաքին միջավայրից չափազանց մեծ կախվածության: Ֆինանսական անկախությունը կարևոր խթան է հանդիսանում երիտասարդի ինքնավարության համար:
- **տնտեսական անկախությունը** վկայում է տնտեսական համակարգում երիտասարդի ակտիվ մասնակցության կարողության մասին: Երիտասարդների անկախության այս բաղադրիչը ներառում է երիտասարդների կյանքի այնպիսի տիրույթներ, ինչպիսիք են զբաղվածությունը, ձեռներեցությունը, տնտեսական ինքնաբավությունը և տնտեսական հնարավորությունների հասանելիությունը: Տնտեսական անկախությունը կենսական նշանակություն ունի երիտասարդների համար հասարակության մեջ իրենց տեղը հաստատելու և իրենց համայնքներում, սոցիալական միջավայրում տնտեսական զարգացմանը նպաստելու համար:

- **մտավոր (կամ արժեքային) ինքնուրույնություն (mental self-direction) կամ անկախությունը** վերաբերում է անձի՝ երիտասարդի ուղղվածությունը գործել՝ հիմնվելով իր սեփական ուժերի վրա, ստեղծագործ նորարարական լուծումների վրա: Այդ արժեքներից են՝ համաձայն Շ. Շվարցի[30], *ինքնակառավարման* արժեքը, *խթանման* արժեքը, *նվաճումների* արժեքը, *իշխանության* արժեքը, և հակադիր արժեքները՝ *ավանդապաշտությունը, համապատասխանությունը* և *ապահովությունը:*
- **առօրյա ինքնուրույնությունը** վերաբերում է երիտասարդների կյանքի այնպիսի տիրույթներին, ինչպիսիք են ինքնասպասարկումը, ժամանակի կառավարումը և առօրյա գործերում որոշումները կայացումը: Այս բաղադրիչի դիտարկումը թույլ է տալիս ուսումնասիրել, թե արդյոք երիտասարդներն ունեն հմտություններ և վստահություն առօրյա պարտականությունները կատարելու համար: Առօրյա անկախությունը խթանում է ինքնաբավությունը և մեծահասակների կյանքին պատրաստվածության զգացումը:

Երիտասարդների անկախությունը բնորոշելու համար հետազոտվել է նաև **քաղաքացիական ակտիվությունը և մասնակցությունը**, ինչը արտացոլում են երիտասարդության ներգրավվածությունը հասարակական և քաղաքական գործընթացներում, պատասխանատվության զգացումը: Բաումանը նշում էր, որ արդի հասարակություններում անհատի ազատականացումը հանգեցնում է անտարբերության[31], հետևաբար կարևոր է նաև ուսումնասիրել երիտասարդների անկախության, քաղաքացիական ակտիվության փոխառնչությունները: Այս բաղադրիչի դիտարկումը երիտասարդների անկախության համատեքստում թույլ է տալիս գնահատել, թե ինչպիսին է երիտասարդների դերը և պատասխանատվությունը հասարակության զարգացման գործում:

Երիտասարդների անկախության համաթվի մաս կազմող բոլոր ենթացուցանիշների և փոփոխականների միջև առկա կապի հուսալիության գնահատման նպատակով կիրառվել է **Կրոնբախի Ալֆա թեստը**, որի արդյունքում **Կրոնբախի Ալֆան** կազմում է 0.834, հետևաբար երիտասարդների անկախության համաթիվը բաղկացած է այնպիսի փոփոխականներից, որոնց միջև փոխպայմանավորվածությունը բարձր է, հետևաբար դրանք կարող են դիտարկվել մեկ ընդհանրական համաթվում:

Հետազոտության արդյունքները վկայում են առ այն, որ **հայաստանյան երիտասարդների անկախության համաթիվը կազմում է** 0,62 (ֆինանսական, տնտեսական, առօրյա և մտավոր անկախության համաթվերի միջինը): Երիտասարդների ֆինանսական անկախության ենթացուցանիշը 0.49 է, տնտեսական անկախության ենթացուցանիշը կազմում է 0.58, մտավոր անկախությունը

---

[30] Տե՛ս **Schwartz S.H**. Basic human values: Their content and structure across countries. In A Tamayo & J.B. Porto (Eds.), Values and behavior in organizations. Petrópolis, Brazil: Vozes, 2005, pp.21-55.

[31] Տե՛ս **Бауман З**. Б29 Текучая современность / Пер. с англ. под ред. Ю. В. Асочакова. — СПб.: Питер, 2008. — 240 с

ամենաբարձր ենթացուցանիշն է՝ 0.71, իսկ առօրյա անկախությունը՝ 0.70, որտեղ 0-ն նվազագույն, իսկ 1–ը առավելագույն միավորն է, ըստ այդմ մենք կարող ենք կազմել երիտասարդների ընդհանուր անկախության մակարդակի մասին պատկերացում:

Երկրորդ ենթագլխում՝ **«ՀՀ երիտասարդների սոցիալական հարմարման գործընթացների ընդհանուր նկարագիրը»**, վերլուծվել է ՀՀ երիտասարդների սոցիալական հարմարման հիմնախնդիրները և մարտահրավերները: Եթե նախապատերազմյան երիտասարդները բախվում էին հիմնականում գործազրկության, կրթության և աշխատաշուկայի կապի խզման, կրթության որակի խնդիրների հետ, ապա հետպատերազմյան Հայաստանում այս խնդիրներին ավելացան նաև վստահության ճգնաժամը, օտարումը կառավարությունից, որոշումների կայացումից, մասնակցության ցածր մակարդակը, հոգեկան առողջության խաթարումը, խուճապային տրամադրությունների ավելացումը, կրթության որակի խնդիրները, որոնք սրվեցին պատերազմից նախորդած համավարակի արդյունքում, Արցախից տեղահանված երեխաների և երիտասարդների կրթության իրավունքի իրացման համատեքստում: Նկարագրված է, թե ինչպիսի պրակտիկաներ են կիրառում հայաստանյան երիտասարդները այս մարտահրավերները հաղթահարելու ուղղությամբ: Հեղինակի կողմից առանձնացվել և կատեգորիզացվել են երիտասարդների շրջանում սոցիալական հարմարման տարածված հետևյալ պրակտիկաները.

- **փախուստը**. երիտասարդը փոխել է կամ ցանկանում է փոխել իր հիմնական բնակության վայրը, աշխատավայրը, մասնագիտությունը,
- **թվային նահանջը**. երիտասարդը պատերազմից հետո սահմանափակել է իր շփումները մարդկանց հետ, հատկապես սոցիալական մեդիայում,
- **ռիտուալիզմը**. երիտասարդը չի ընդունում իրավիճակը Հայաստանում, սակայն չի ցանկանում փոխել իր նպատակները և դրանց հասնելու միջոցները՝ կիրառելով միկրոռազմավարություններ,
- **կառավարման արտաքին լոկուսը**. երիտասարդը չի կարող ոչինչ փոխել Հայաստանի հետպատերազյան իրավիճակում և սպասում է, որ արտաքինից փոխեն, ուրիշները կարգավորեն իրավիճակը,
- **նահանջը**. երիտասարդը նվազեցրել է իր ձգտումները և նպատակները պատերազմից հետո, չի ձգտում դրանց հասնելուն, հետևում է իրադարձություններին,
- **ապագայի պլանավորումը**. երիտասարդների մի մասի համար կարևոր է պլանավորել կյանքը մի քանի տարվա համար, այսինքն ունենալ ռազմավարական հեռանկար, իսկ արտակարգ իրավիճակներում երիտասարդները կիրառում են մարտավարական պրակտիկա՝ փորձում են լուծել այդ օրվա խնդիրը և հեռուն չեն նայում,
- **ակտիվ մասնակցությունը**. երիտասարդների մի մասը ակտիվ մասնակցություն է ունեցել հետպատերազմյան իրավիճակը լավացնելու մեջ, մասնակցել է պատերազմին՝ որպես զինվորական կամ կամավոր ռազմի դաշտում, որպես կամավոր թիկունքում կամ ֆինանսական, այլ տիպի աջակցություն է ցույց տվել,

• **առաջնորդությունը**. երիտասարդների մի մասը բաց է մշտական փոփոխությունների և նորարարությունների համար և հակված է առաջնորդելու և պնդելու իր համոզմունքները:

Չորրորդ գլխի երրորդ ենթագլխում՝ «**ՀՀ երիտասարդների տիպաբանությունը ըստ անկախության և հարմարման պրակտիկաների**» վերհանվել է, թե հայաստանյան երիտասարդների ինչպիսի տիպեր են առկա: Երիտասարդների հարմարման պրակտիկաների վրա ազդող գործոնների առավել խորքային ուսումնասիրման նպատակով հետազոտության արդյունքների հիման վրա իրականացվել է **կլաստերային վերլուծություն:**

Կլաստերային վերլուծություն արդյունավետ իրականացման նպատակով կիրառվել է իտերատիվ կլաստերացման *k*-միջինների մեթոդը: Որպես կլաստերացման հիմք ընտրվել են երիտասարդների անկախության ցուցանիշները և հարմարման պրակտիկանները բնութագրող փոփոխականները: Ըստ հետազոտության արդյունքների դուրս են բերվել **երիտասարդների հինգ խմբեր:**

Հետազոտության համապարփակ վերլուծությունը թույլ տվեց բացահայտել հայաստանյան երիտասարդների տիպաբանությունը սոցիալական հարմարման և անկախության փոխառնչությունների տեսանկյունից: Ներկայացված տիպաբանությունը ուսումնասիրության լայն հնարավորություններ է ընձեռնում, որը թույլ է տալիս հասկանալ երիտասարդության վարքագիծը հետպատերազմյան և ճգնաժամային իրավիճակներում և համապատասխան տեսական և պրակտիկ կիրառական լուծումներ առաջարկել ծագող մարտահրավերներին և խնդիրներին արձագանքելու համար: Այս տիպաբանությունը թույլ է տալիս քաղաքականություն մշակողներին ավելի թիրախային լուծումներ առաջարկել:

Ատենախոսության **եզրակացության** մեջ ներկայացված է ատենախոսության ամփոփումը. կատարված եզրահանգումներից առանձնացվում են հետևյալները.

- Հետպատերազմյան Հայաստանում երիտասարդները կանգնած են մի շարք լուրջ մարտահրավերների և խնդիրների առջև. ա) վստահության ճգնաժամ՝ ապագայի նկատմամբ վստահության պակաս, օտարվածություն համայնքից, պետությունից, պետական ինստիտուտներից, մասնակցության ցածր մակարդակ, բ) առողջապահական կարիքներ՝ հոգեկան առողջության խնդիրներ, առողջ ապրելակերպի մշակույթի բացակայություն և վնասակար սովորությունների տարածվածություն, գ) կրթական կարիքներ՝ կրթության որակի խնդիրներ, ներառականության խնդիրներ, ոչ ֆորմալ կրթական ծրագրերի մասնակցության ցածր մակարդակ, համայնքային կրթական ծառայությունների պակաս, դ) ինքնակայացման, ինքնության ձևավորման համար ժամանակի և տարածության կազմակերպման հնարավորությունների պակաս, ե) աշխատաշուկայում լիարժեք ներգրավվելու հնարավորությունների պակաս:
- Հետպատերազմյան Հայաստանի առկա մարտահրավերներին արձագանքելու երիտասարդների սոցիալական հարմարման պրակտիկաների վրա նշանակալի են հետևյալ գործոնների ազդեցությունը՝ 1. երիտասարդների անկախության

մակարդակը, 2. ակտիվությունը՝ նախաձեռնողականություն, նպատակադրում, 3. ներկա իրավիճակի ընդունման հանգամանքը, 4. ներկա իրավիճակի փոփոխելու ցանկությունը, 5. ապագայի պատկերացումները:

- Ըստ անկախության համաթվի հայաստանյան երիտասարդների անկախ խմբերն են՝
  - Ֆինանսապես անկախ՝ 23-29 տարեկան երևանաբնակ աղջիկներ և 30-35 տարեկան գյուղաբնակ տղաներ՝ 0,56
  - Տնտեսապես ակտիվ՝ 30-35 տարեկան երևանաբնակ աղջիկներ և տղաներ՝ 0,73 և 0,8
  - Մտավոր անկախ՝ 23-29 տարեկան քաղաքաբնակ տղաներ՝ 0,75
  - Առօրյա անկախ կամ ինքնուրույն՝ 23-29 տարեկան գյուղաբնակ տղաներ՝ 0,91:
- Ըստ անկախության համաթվի հայաստանյան երիտասարդների կախյալ խմբերն են՝
  - Ֆինանսապես կախյալ՝ 30-35 տարեկան գյուղաբնակ աղջիկներ և 23-29 տարեկան գյուղաբնակ տղաներ՝ 0,36 և 0,3
  - Տնտեսապես ոչ ակտիվ՝ 18-22 տարեկան գյուղաբնակ աղջիկներ և տղաներ՝ 0,38 և 0,36
  - Մտավոր կախյալ՝ 23-29 տարեկան գյուղաբնակ աղջիկներ՝ 0,66
  - Առօրյա ոչ անկախ կամ ոչ ինքնուրույն՝ 18-22 տարեկան գյուղաբնակ աղջիկներ՝ 0,42:
- Ըստ անկախությունը և սոցիալական հարմարման պրակտիկաները բնութագրող փոփոխականների համալիր վերլուծության հայաստանյան երիտասարդներին կարելի է բաժանել հետևյալ հինգ խմբերի.
  1) «նորարար առաջնորդներ», որոնց բնորոշ է մտավոր և առօրյա անկախության ամենաբարձր մակարդակը, բարձր է նաև քաղաքացիական ակտիվությունը: Սա հատկապես դրսևորվում է ընտրություններին մասնակցությամբ և քաղաքացիական ակտիվությամբ, կամավորական աշխատանքներում առաջնորդի դեր ստանձնելով: «Նորարար առաջնորդներ» խմբի երիտասարդների շարքում ավելի շատ են 23-29 տարիքային խմբի մայրաքաղաքում բնակվող երիտասարդները:
  2) «կայունության ջատագովներ», որը տնտեսապես անկախ խումբ է, որը ստացել է մասնագիտական կրթություն, ունի աշխատանքային փորձ, կայացած է իր ոլորտում: Զգտելով կայունության՝ այս խմբի երիտասարդները պատրաստ են փոխելու մշտական բնակության վայրը, մեկնել արտերկիր մշտական բնակության համար: Կայունության ջատագովներ խմբի հիմնական մասը 30-35 տարիքային խմբից է, ամուսնացած կարգավիճակ ունեցող երիտասարդները ամենաշատը այս խմբում են:
  3) «համակերպվողներ», այս խմբի երիտասարդներին բնորոշ չէ արտահայտված անկախության որևէ դրսևորում, ֆինանսապես կախյալ խումբ է, նրանց մոտ ցածր է սեփական կարիքները հոգալու կարողության ինքնագնահատականը:

Համակերպվող երիտասարդների հիմնական մասը 18-22 տարիքային խմբի գյուղաբնակ երիտասարդներն են:

4) «հուսահատներ», այս խմբի երիտասարդներին բնորոշ է բարձր մտավոր անկախությունը, սակայն ֆինանսապես կախյալ են, ունեն մասնագիտական կրթություն, ամուսնացած չեն: Այս խմբի երիտասարդները նվազեցրել են իրենց նպատակները, ձգտումները, ցանկանում է փոխել ոլորտը պատերազմից հետո: Այս խմբի երիտասարդների հիմնական մասը 18-22 տարեկան քաղաքաբնակ երիտասարդներն են:
5) «ինքնահաստատվողներ», այս խմբի երիտասարդներին բնորոշ է ֆինանսական անկախությունը և քաղաքացիական ակտիվությունը, բարձր է նաև տնտեսական անկախությունը: Կամավորական աշխատանքներում այս խումբը ակտիվ է, ինչը նրանց համար հարթակ է, որտեղ կարող են իրենց փորձել, ինքնադրսևորվել և գտնել: Նրանք ունեն հստակ նպատակներ, ձգտումներ, բայց չգիտեն ինչպես հասնել դրանց, փորձում են տարբեր եղանակներ: Այս խմբի հիմնական մասը 23-29 տարիքային խումբն է ներկայացնում, մայրաքաղաքում բնակվող:

- Երիտասարդներին ուղղված պետական քաղաքականության առաջարկներ՝
  - Միգրացիոն տրամադրություններ ունեցող երիտասարդների խմբերի համար տեղական երկարաժամկետ ծրագրերում մասնակցության հնարավորությունների ստեղծում, հատկապես կրթության, զբաղվածությանն ուղղված,
  - Ֆինանսական և տնտեսական անկախության ցուցանիշներով առավել խոցելի խմբերի համար երկարաժամկետ և կարճաժամկետ ծրագրերի մշակում՝ մասնակցայնության սկզբունքով,
  - «Նորարար առաջնորդներ» խմբի երիտասարդներին ուղղված մոբիլիզացիոն ռեսուրսների և հարթակների ձևավորում համայնքային, ազգային մակարդակներում,
  - Համայնքներում երիտասարդների համար ազատ տարածքների (free space) ստեղծում,
  - Երիտասարդների հետ աշխատանքների, ծրագրերի, քաղաքականությունների մշակում տարբերակված մոտեցման հիման վրա, ոչ միայն ըստ սեռ, տարիք, բնակության վայր և այլ չափանիշների, այլ ըստ երիտասարդների անկախությունը, ինքնադրսևորման պատկերացումները, սեփական դերակատարման ընկալումները ներկայացնող բնութագրիչների,
  - Ինքնահաստատման հնարավորություն փնտրող երիտասարդների համար քաղաքացիական ոչ ինստիտուցիոնալ մասնակցության, կամավորական աշխատանքի տարբերակված հնարավորությունների ձևավորում՝ մենթորություն, հետաքրքրությունների խմբեր, մասնագիտական խորհրդատվական խմբեր:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. **Գալստյան Մ. Կ.,** Արցախից բռնի տեղահանված երիտասարդների հարմարումը կրթական համակարգում, «Կրթությունը 21-րդ դարում» Գիտամեթոդական միջազգային գրախոսվող հանդես, Թիվ 1-9/2/, 2023, էջ 16-27:
2. **Գալստյան Մ. Կ.,** ՀՀ երիտասարդների քաղաքացիական և քաղաքական մասնակցությունը հետպատերազմյան իրականությունում. ընկալումներ և պրակտիկաներ, Վերլուծական տեղեկագիր (ՔՄՀԿ) 16, 2023, էջ 79-111:
3. **Գալստյան Մ. Կ.,** ՀՀ երիտասարդների մասնակցությունը ոչ ֆորմալ կրթությանը և հարմարումը աշխատաշուկայում, «Կրթությունը 21-րդ դարում» Գիտամեթոդական միջազգային գրախոսվող հանդես, Թիվ 1-9/1/, 2023, էջ 25-33:
4. **Գալստյան Մ. Կ.,** Կորուսյա՞լ, թե՞ ուսյալ սերունդ. երիտասարդները հետպատերազմյան իրականությունում, Արցախի պետական համալսարանի Գիտական Տեղեկագիր, ՊՐԱԿ 1, 2023, Հասարակական գիտություններ, էջ 290-308:
5. **Գալստյան Մ. Կ.,** ՀՀ երիտասարդների սոցիալական հարմարումը հետպատերազմյան իրականությունում. սոցիոլոգիական վերլուծություն, Регион и мир, 2023, № 1, էջ 23-29:
6. **Գալստյան Մ. Կ.,** Մասնագիտական կրթության որակի արդի հիմնախնդիրները Հայաստանում, Բանբեր Երևանի համալսարանի. Սոցիոլոգիա, 2021, № 1, էջ 71-78:
7. **Գալստյան Մ. Կ.,** Հեռավար ուսուցումը Հայաստանում համավարակի ժամանակ. դիսկուրս վերլուծություն, «Կրթությունը 21-րդ դարում» Գիտամեթոդական միջազգային գրախոսվող հանդես, Թիվ 2(6), 2021, էջ 77-85:
8. **Գալստյան Մ. Կ.,** Երիտասարդների մասնակցության հարթակները ՀՀ կրթական համակարգում, Լրաբեր Հայ-ռուսական համալսարանի, Սերիա՝ հումանիտար և հասարակական գիտություններ (34) ՀՌՀ Հրատարակչություն № 1/2020, էջ 127-140:
9. **Galstyan, M.** Conceptualizing and Measuring Economic and Social Aspects of Youth Independence in Armenia. Journal of Sociology: Bulletin of Yerevan University, 15(1 (39), 2024, 28–42.
10. **Galstyan, M. K.** Re-Conceptualising Youth: Theoretical Overview. Journal of Sociology: Bulletin of Yerevan University, 13(2 (36), 2022, էջ 22-27:
11. **Galstyan, M. K.** The challenges of distance education (the case of Armenia), Rybińska, A., Şenyuva, Ö., Poszytek, P. (eds.). Evidence-based approach in Erasmus+ and European Solidarity Corps. Warsaw seminar 2021. Warsaw: FRSE Publishing House. ISBN 978-83-66515-82-6, 2022, էջ 92-103:
12. **Galstyan, M. K.** Development of Human Capital in Armenia: Youth Employment and Youth Policy, Управление человеческими ресурсами в сфере физической культуры, спорта и здорового образа жизни: сб. науч. ст. Всерос. науч.-практ. конф. с междунар. участием, С.-Петербург, 23–25 мая 2019 г. – СПб.: ПОЛИТЕХ-ПРЕСС, 2019. – 514 с., էջ 56-59:

ГАЛСТЯН МАРИНА КАРЕНОВНА

ПРАКТИКИ СОЦИАЛЬНОЙ АДАПТАЦИИ МОЛОДЕЖИ РА В ПОСЛЕВОЕННОЙ АРМЕНИИ

Диссертация на соискание ученой степени кандидата социологических наук по специальности 22.00.01 - «Методология, теории социологических исследований, социальные технологии и процессы».

Защита состоится 30-ого сентября 2024 г. в 15:00 на заседание специализированного совета Философии и социологии 013, Ереванский государственный университет.

Адрес: 0025, г. Ереван, ул. Абовяна 52а.

РЕЗЮМЕ

В контексте процессов социальных изменений в обществе исследования, посвященные социальной адаптации молодежи, становятся особенно актуальными. Молодежь представляет собой основной социальный ресурс в любом обществе, от возможностей мобилизации которого во многом зависит будущее жизнеспособности общества. Проблема социальной адаптации молодежи приобретает особое значение в контексте перспектив будущего развития общества. Молодежь, как уникальная группа, находящаяся на переходном этапе от детской зависимости к обретению самостоятельности, особенно остро ощущает влияние изменений в окружающей среде, особенно в периоды кризисов. Молодежь еще не полностью самостоятельна, и кризисные ситуации делают их особенно уязвимыми. В таких условиях изучение адаптации молодежи приобретает академическое, методическое, а также практическое значение и необходимость.

Цель исследования - выявление практик социальной адаптации молодежи в Армении в условиях послевоенной реальности.

Научная новизна данного исследования заключается в выявлении основных факторов, определяющих исновные адаптативные практики молодежи в послевоенной Армении, типологизации социально-адаптационных практик молодёжи в широком спектре областей, в том числе в социально-экономической, социально-политической, социально-культурной. Также в работе определена и протестирована система индикаторов независимости молодежи (Индекс независимости молодежи), разработана типология армянской молодежи по типу их социальной адаптации.

Диссертация состоит из введения, четырех глав (11 подразделов), заключения, списка использованной литературы и приложений.

В первой главе **"Послевоенная реальность как объект социологического изучения"** проведен анализ социологических подходов к изучению послевоенных реалий и методики исследования. В ней рассматриваются основные характеристики общества и молодежи в послевоенный период, а также описываются основные теоретические концепции и методология анализа послевоенной реальности, используемые в литературе.

Во второй главе **"Молодежь как объект социологического исследования"** рассматривается влияние молодежи на общество, подходы молодежных социологических исследований в аспекте понимания восприятий молодежи и их особенностей до и после войны, а также общая характеристика социально-экономического положения армянской молодежи.

Третья глава **"Социальная адаптация как социологическая проблема"** представляет разнообразные подходы определения и социологического анализа понятия социальной адаптации, такие как психологические, философские, правовые и социологические подходы, определение социальной адаптации, анализ типологических оснований и проблем, связанных с социальной адаптацией, включая независимые оценки исследований образовательных процессов молодежи.

Четвертая глава **"Практики социальной адаптации молодежи в послевоенной Армении"** охватывает исследования социальных практик молодежи в Армении в условиях послевоенного периода, включая социально-экономические, политические и культурные аспекты социальной адаптации молодежи. В соответствии с анализом социальных и культурных практик социальной адаптации, автор представляет типологию адаптативных практик молодежи.

В диссертации делается вывод о том, что на социальные адаптационные практики молодежи в ответ на текущие вызовы послевоенной Армении значительное влияние оказывают следующие факторы: 1. Уровень социальной независимости молодежи, 2. Уровень социальной активности – в т.ч. инициативность, целеустремленность, 3. Степень принятия текущей ситуации, 4. Глубина стремления изменить текущую ситуацию, 5. Представления о будущем.

В результате исследования были выявлены основные распространенные практики социальной адаптации молодежи в числе которых: бегство от реальности, цифровое отчуждение в политическом поле, ритуализм, внешний локус контроля, отступление от собственных целей, а также планирование будущего, активное участие и лидерство. Согласно результатам исследования, были выделены следующие типологические группы молодежи: «лидеры-новаторы», «сторонники стабильности», «приспособленцы, ритуалисты», «отчаявшиеся, заблудшие», «самоутверждающиеся».

GALSTYAN MARINA KAREN

THE SOCIAL ADAPTATION PRACTICES OF RA YOUTH IN POST-WAR ARMENIA

Dissertation submitted for receiving academic degree of the doctor of sociology under the speciality 22.00.01 - "Methodology, theories of sociological research, social technologies and processes".

The defense of the dissertation will take place on 30th of September, 2024 at 15:00 at the session of the Specialized Council 013 of Philosophy and Sociology based in Yerevan State University.

Address: 0025, Yerevan, 52a Abovyan St., YSU

ABSTRACT

In the context of societal processes of social change, studies dedicated to the social adaptation of youth become increasingly relevant. Youth represent the primary social potential in any society, and the future viability of society largely depends on the ability to mobilize this potential. The issue of youth social adaptation becomes particularly significant in the context of future societal development prospects. Youth, as a unique group in the transitional phase from childhood dependency to independence, are more acutely affected by environmental changes, especially during crises. Youth are not yet fully independent, and crisis situations render them doubly vulnerable. In such contexts, the study of youth adaptation holds academic, methodological, and practical significance and necessity.

The **goal** of this research is to elucidate the social adaptation practices of youth in post-war Armenia.

The **scientific novelty** of this dissertation includes the primary characteristics of youth in post-war Armenia, the social adaptation practices of youth in post-war Armenia, and the peculiarities of these practices in socio-economic, socio-political, and socio-cultural spheres. It also includes the system of indicators for measuring youth independence—the youth independence index—and the typology of Armenian youth.

The dissertation includes an introduction, four chapters (11 subchapters), a conclusion, a list of references, and appendices.

In the first chapter, **"Post-war Reality as a Field of Sociological Study",** the author presents sociological theories and approaches that examine post-war societies, identifies the main characteristics and challenges of post-war society, and highlights the primary characteristics of youth in post-war societies.

The second chapter, **"Youth as an Object of Sociological Study",** addresses the main sociological approaches discussing the role of youth in society, the definition of the concept of youth, and the general description of pre-war and post-war Armenian youth.

In the third chapter, **"Social Adaptation as a Sociological Issue"**, the author presents psychological, philosophical, behavioral, and sociological approaches to the interpretation of adaptation, theoretical foundations for defining and typologizing social adaptation, as well as methodological foundations and issues of studying social adaptation, including the peculiarities of youth studies.

The fourth chapter, **"Social Adaptation Practices of Youth in Post-war Armenia"**, presents the challenges faced by Armenian youth, social adaptation practices in post-war Armenia, addressing the socio-economic, political-civic, and cultural spheres of youth adaptation practices. Based on the factor analysis of independence and adaptation practices, the author presents the typology of Armenian youth.

The dissertation concludes that the following factors significantly influence the social adaptation practices of youth in response to the current challenges in post-war Armenia: 1. youth independence, 2. Activity - initiative and goal-setting, 3. acceptance of the current situation, 4. desire to change the current situation, 5. vision of the future.

The prevalent social adaptation practices among youth include escape, digital retreat, ritualism, external locus of control, withdrawal, future planning, active participation, and leadership. According to the research results, the following groups of youth have been identified: "innovative leaders," "advocates of stability," "conformists, ritualists," "desperate, lost," and "self-assertive."